ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2016 թվականի N 40-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանարապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Աբովյան, Քաղսի և Նոր-Երզնկա համայնքների մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Ռոման Գրիգորյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Թամարա Բաղալյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, Գենյա Նահապետյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ և Արսեն Խաչատրյանին 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի փետրվարի 17
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2016 թվականի փետրվարի 17-ի N 40-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Ռոման Գրիգորյան	գ. Նոր-Երզնկա 12 փողոց 46 բնակարան	15 000	
2	Թամարա Բաղալյան	ք. Արովյան Սարալանջի 22 շենք 48 բնակարան	20 000	
3	Գենյա Նահապետյան	ք. Հրազդան Կենտրոն 42 շենք 18 բնակարան	20 000	
4	Արսեն Խաչատրյան	գ. Քաղսի	10 000	